ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/9605-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1233-29.12.2025,04.02.2026-ԳԿ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները՝ լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 9-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերում առավել հստակեցնել սահմանվող արգելքի առարկան՝ այն կապելով տեղեկատվության բովանդակային բնութագրիչների հետ և խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«1) սահմանադրական կարգը բռնի տապալելուն կամ պատերազմին կոչ անող, այդպիսի գործողությունները խրախուսող կամ արդարացնող տեղեկատվության տարածումը.»,

«3) ազգային, կամ ռասայական, կամ սեռային, կամ կրոնական ատելություն բորբոքող, ինչպես նաև տարիքային, կամ հաշմանդամության, կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն սերմանող, խրախուսող կամ արդարացնող տեղեկատվության տարածումը.»:

բ) 4-րդ կետում՝ «պոռնկագրություն տարածելը» բառերից հետո լրացնել «,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածը»

բառերը:

Առաջարկի նպատակն է, որպեսզի վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (Կարգավորող պետական մարմին) առաջնորդվի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով:

գ) 2-րդ մասում՝ «կոչի» բառի փոխարեն լրացնել «իրավախախտման» բառը, հաշվի առնելով, որ գործող օրենքում կիրառվում է «իրավախախտման» տերմինը:

դ) 4-րդ մասում՝ «Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և» բառերից հետո լրացնել «ֆիլմերը» բառը, հաշվի առնելով, որ էրոտիկ բնույթի բովանդակություն կարող է պարունակվել նաև ֆիլմերում:

ե) 6-րդ մասը առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«6. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ պատերազմին կոչ անող, այդպիսի գործողությունները խրախուսող կամ արդարացնող տեղեկատվության տարածման, 2-րդ, 3-րդ կետերով և 4-րդ, 5-րդ մասերով նախատեսված տեսալսողական հաղորդումների նկատմամբ տարածվող չարաշահման արգելքների չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը:»:

2. 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը առաջարկում ենք ձևակերպել հետևյալ բովանդակությամբ՝

«Կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելու, դրա հաստատման, ինչպես նաև ծանուցման հաստատման մասին ընդունված վարչական ակտի իրավական ուժի դադարեցման գործընթացի կարգավորումն իրականացվում է սույն օրենքի 54-րդ հոդվածի դրույթների պահանջներին համապատասխան»:

3. 4-րդ հոդվածով Օրենքի 54-րդ հոդվածում լրացվող նոր 7-րդ մասում՝ «մարմինն իրավասու է» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «վարչական վարույթի արդյունքում» բառերը:

4. 10-րդ հոդվածի՝

ա) 2-րդ կետում՝ «2-րդ հոդվածի 1-ին մասի» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «1-ին կետով սահմանված՝ պատերազմին կոչ անող, այդպիսի գործողությունները խրախուսող կամ արդարացնող տեղեկատվության տարածման» բառերը, իսկ «4-րդ մասով» բառերի փոխարեն լրացնել «4-րդ, 5-րդ մասերով» բառերը:

բ) 4-րդ մասը հանել՝ հաշվի առնելով, որ նախագծով նշված կարգավորումն այլևս

արդիական չէ, այն այլևս չի բխում գործող կարգավորման տրամաբանությունից և կիրառելի չէ ծանուցման ընթացակարգի շրջանակում:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ